

ՀՈՒՍԻԿՅԱՆ

1964 թ. դեկտեմբերի 28-ին Մոսկվայում վախճանվեց Սովետական Միության ականավոր հայագետներից մեկը՝ պրոֆ. Հովսեփ Կուսիկյանը:

Հ. Կ. Կուսիկյանը ծնվել է 1890 թ. հունիսի 26-ին, գրականագետ Կարապետ Կուսիկյանի ընտանիքում: Գնալով հոր ճանապարհով՝ նա դարձավ հայագետ և բյուզանդագետ: Առաջին անգամ Կուսիկյանը տպագրվեց 1918 թ., հետագայում աշխատակցում էր բազմաթիվ ամսագրերի և ժողովածուների, այդ թվում նաև «Византийский временник», «История СССР», «Советская книга», «Սովետական գրականություն» և այլն, ինչպես նաև արտասահմանյան ամսագրերի: Նա աշխատակցել է նաև հանրագիտարանների: Այսպես օրինակ, «Փոքր սովետական հանրագիտարանում» տպագրվել են Հ. Կուսիկյանի հոդվածները Կուրդիստանի, Նախընդյանի, Հովհաննիսյանի, Փափաղյանի, Պարոնյանի, Պատկանյանի, Պեշկեթյանի և Բաֆֆու մասին: «Սովետական մեծ հանրագիտարանում» տպագրվել են Հ. Կուսիկյանի հետևյալ հոդվածները. «Հայոց լեզու», «Հ. Ա. Աճառյան», «Աշխարհարար», «Հյուրըման», «Գրարար», «Հայ հնագրություն»: Հ. Կուսիկյանի տպագիր աշխատությունների թիվը հասնում է 90-ի, որոնց թվում՝ մի շարք յուրջ մենագրություններ:

Ապրելով Մոսկվայում, պրոֆ. Հ. Կուսիկյանը միշտ սերտ կապ է պահպանել Սովետական Հայաստանի ու նրա գիտնականների, նրա բարձրագույն հաստատությունների հետ: Համարյա յուրաքանչյուր տարի այցելել է Հայաստան, դասախոսություններ կարդացել պետական համալսարանում, հայկական մանկավարժական ինստիտուտում, ռուսական մանկավարժական ինստիտուտում: Միաժամանակ ուշի-ուշով հետևել է գիտության զարգացմանը Հայաստանում, արձագանքել գիտական բոլոր լուրջ ձեռնարկումներին, հանդես է եկել գիտական պարբերականներում, վերլուծելով և գնահատելով Հայաստանի գիտության և, հատկապես, հայագիտության առանձին բնագավառներ: Սովետական Հայաստանի գիտության և կադրերի աճման համար նա կատարել է անգնահատելի գործ:

Պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանը լրջախոհ հետազոտող էր: Նա ռուսերեն լեզվով հրատարակել է երեք մենագրություն. «Ժամանակակից հայ գրական լեզվի քերականություն» (1950), «Հայ գրական լեզվի պատմական շարահյուսության սովորվածներ» (1959), «Փոփոխություններ սովե-

տական շրջանի հայոց գրական լեզվի բառային կազմում» (1964):

«Հայ գրական լեզվի քերականություն» աշխատությունը հայոց լեզվի նորմատիվ քերականությունն է՝ ռուսերեն լեզվով շարադրված:



Հայտնի է, որ Հայաստանում 1932—34 թթ. տեղի ունեցավ քերականության ուղղության փոփոխություն. Մ. Արեղյանի քերականական սխտեմը փոխարինվեց նոր սխտեմով: Այդ նոր ուղղությունը, օգտագործելով իր նախորդների գրական նվաճումները, նոր դասավորություն, մի շարք նոր բարդություններ և նոր կառուցվածք տվեց հայոց լեզվի նորմատիվ քերականության համակարգին: Պրոֆ. Հ. Կուսիկյանը մեկն էր այն լեզվաբաններից, որոնք կողմնակից եղան քերականության այդ վերակառուցմանը և պաշտպանեցին այն իրենց հեղինակավոր խոսքով ու միջամտությամբ: Ահա այդ համակարգի շարադրանքն էր, որ ռուսերեն լեզվով տրվում էր Հ. Կուսիկյանի «Ժամանակակից հայ գրական լեզվի քերականություն» աշխատության մեջ:

Հ. Կուսիկյանի երկրորդ աշխատությունը «Հայոց գրական լեզվի շարահյուսության պատմական ակնարկներ» վերնագիրը կրող գործն է: Ինչպե՞ս միանգամայն նորություն էր հայ քերականագիտության մեջ: Այդ աշխատության մեջ պրոֆ. Հ. Կուսիկյանը տվեց հայոց լեզվի շարահյուսության զարգացման պատմության պե-

րիողիզացիան, փորձեց հիմնավորել և միմյան-
ցից սահմանագծել իր առաջարկած շրջանները:

**Պրոֆ. Ն. Կուսիկյանի «Փոփոխություններ սո-
վետական շրջանի հայոց գրական լեզվի բառա-
յին կազմում» աշխատությունն** իրապես մեր
բառային կազմի զարգացման պատմության մի
ուրվագիծ է: Նախասովետական շրջանին նվիր-
ված են համեմատաբար քիչ, բայց շատ բովան-
դակալից էջեր: Աշխատության մեծ մասը նվիր-
ված է հայոց լեզվի բառային կազմի զարգաց-
մանը սովետական շրջանում: Հեղինակին հա-
ջողվել է որոշել մեր բառապաշարի հարստաց-
ման առողջ տենդենցները, ցույց տալ Սովետա-
կան Հայաստանի իրականության նոր և առա-
ջադիմական գործոնները, որոնք բառային կազ-

մի հարստացման հիմնական խթաններն են
դառնում. ապա նաև այն ուղիները, որով Սովե-
տական Հայաստանի սոցիալիստական շինարա-
րությունը հարստացնում է հայոց լեզուն և
բարձրացնում զարգացման նոր աստիճանի:

Պրոֆ. Ն. Կուսիկյանը ուներ նորի զգացում,
նա հալոններ էր, սովետական ազնիվ թաղա-
քացի, կողմնակից և պաշտպան նորին, առա-
ջադիմականին: Նրա երկարատև, արգասավոր
գործունեությունը կարող է օրինակ ծառայել գի-
տական աշխատողների երիտասարդ սերնդի հա-
մար:

Ա. ՂԱՐԻՔՅԱՆ

Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Իր կյանքի ուղին ավարտեց բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության
վաստակավոր գործիչ, բանաստեղծ և թարգմա-
նիչ Համազասպ Ասատուրի Համբարձումյանը:



1965 թ. փետրվարի 5-ին մաափսրականության
ներկայացուցիչների մի հոծ բազմություն թյու-
րականում, տեղի բնակչության հետ մեկտեղ,
վերջին հրամեշար տվեց այն վաստակավոր
ծերունուն, որ հայտնի և սիրելի էր ամենքին:

85 տարեկան էր նա, սակայն և՛ զստախո-
տական ամբիոնի առաջ, և՛ գիտական վիճարա-

նությունների մեջ նա հանդես էր բերում խան-
դավառություն և գիտականի անսպառ կորովա-
մատություն, նյութի արտակարգ իմացություն,
փաստարկելու, տրամաբանելու և համոզելու
կարողություն:

Բնությունը նրան օժտել էր մեկից ավելի գի-
տություններ տիրապետելու շնայլ հնարավորու-
թյուններով: Համազասպ Համբարձումյանը չէր
կարող պարփակվել նրանի գիմնագիտյի կամ
Թիֆլիսի ներսիսյան զպրոցի շրջանակներում:
Նրա անհանգիստ միտքը որոնում էր նոր ափեր,
նոր հորիզոններ: Նվ ահա մենք նրան տեսնում
ենք Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ապա՝
Պետերբուրգի համալսարանի իրավաբանական
ֆակուլտետում, որն ավարտում է 1908 թ.:

Պետերբուրգից վերադառնալով Թիֆլիս, Համ-
բարձումյանն զբաղվում է իրավաբանական և
գրական գործունեությամբ: Նա արդեն ծանոթ
անուն էր գրական հասարակայնության համար,
իր բանաստեղծական մոզովածուններով ակտի-
վորեն մասնակցում էր Հովհ. Քումանյանի
գլխավորած Կովկասի հայ գրողների ընկերու-
թյան աշխատանքներին՝ իբրև այդ ընկերության
քարտուղար:

1925 թ. Համազասպ Համբարձումյանը Լե-
նինգրադում է, այս անգամ ոչ որպես ուսանող,
այլ՝ զստախոտ Լենինգրադի պետական համալս-
արանում, ֆինանսական-էկոնոմիկական ինտ-